**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

«14» հունվարի 2025 թվական

# *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1*
# *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի՝ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ*

Նիստին մասնակցում են համայնքի ավագանու 15 անդամներից՝ Նորայր Սանթրոսյանը, Հայկ Վարդանյանը, Լուսինե Երիցյանը, Գոռ Մարկոսյանը, Գայանե Մելքումյանը, Արթուր Պապանյանը, Վարսենիկ Բլեյանը, Արկադի Գևորգյանը, Կարինե Մարտիրոսյանը, Գասպար Բաղդասարյանը, Քյալո Հասոյանը, Մետաքսյա Մարգարյանը, Գրիշա Կոբալյանը:

Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, քանի որ նիստին մասնակցում են ավագանու անդամների կեսից ավելին:

Նիստը վարող՝ համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյան:

Արձանագրող՝ Արմինե Պետրոսյան:

Համայնքի ավագանու նիստին մասնակցում են՝ Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար Կարեն Խաչատրյանը, Զովք գյուղի վարչական ղեկավար Նորիկ Գևորգյանը,աշխատակազմի աշխատակիցներ, «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Գրիշա Գևորգյանը:

Աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը հրապարակեց, որ ավագանու անդամներ Հուսիկ Գրիգորյանը և Աննա Մարտիրոսյանը տեղեկացրել են բացակայության մասին, այն է՝ աշխատանքի բերումով գտնվում են հերթապահության մեջ, այդ իսկ պատճառով չեն կարող ներկայանալ նիստին:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը.

## *Օ Ր Ա Կ Ա Ր Գ*

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 151-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
5. Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
6. Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
7. Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
8. Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
9. Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:
10. Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

11. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

***1. ԼՍԵՑԻՆ – ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ և 65-րդ հոդվածների,

1. ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 14-ի՝ արտահերթ թիվ 1 նիստի օրակարգը.

1) Համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 151-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3) Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

4) Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

5) Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

6) Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

7) Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

8) Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

9) Հողամասը և շինությունը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

10)Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

***2. ԼՍԵՑԻՆ - ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Վարսենիկ Բլեյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով,

ՈՐՈՇՎԵՑ - Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2024 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

### 3. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 151-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գոռ Մարկոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 151-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված NN 2-6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն NN 1-5 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

### 4. ԼՍԵՑԻՆ - ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գայանե Մելքումյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով,

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

### 5. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գոռ Մարկոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կազմված և

սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 31,2 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 19,72 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձի՝ Նվեր Մարտունի Եգանյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 31,2 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 19,72 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 31,2 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 19,72 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Նվեր Մարտունի Եգանյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 31,2 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 19,72 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն ուղղակի վաճառքի ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձ, գնման նախապատվության իրավունքով օտարել Նվեր Մարտունի Եգանյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 328 031 (երեք հարյուր քսանութ հազար երեսունմեկ), իսկ ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 53 737 (հիսուներեք հազար յոթ հարյուր երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

### *6. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)*

ԶԵԿՈՒՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գայանե Մելքումյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 22,5 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 17,08 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձի՝ Թորգոմ Զորիկի Ստեփանյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 22,5 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 17,08 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 22,5 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 17,08 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Թորգոմ Չորիկի Ստեփանյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0037 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 22,5 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 17,08 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն ուղղակի վաճառքի ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձ, գնման նախապատվության իրավունքով օտարել Թորգոմ Չորիկի Ստեփանյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 363 974 (երեք հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր յոթանասունչորս), իսկ ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 54 759 (հիսունչորս հազար յոթ հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

### *7. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)*

ԶԵԿՈՒՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գոռ Մարկոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 31-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 20,9 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 20,9 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձի՝ Սողոմոն Միխայիլի Մկրտումյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 20,9 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 20,9 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 20,9 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 20,9 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Սողոմոն Միխայիլի Մկրտումյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 20,9 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 20,9 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն ուղղակի վաճառքի

ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձ, գնման նախապատվության իրավունքով օտարել Սողոմոն Միխայիլի Մկրտումյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է. 219 739 (երկու հարյուր տասնինը հազար յոթ հարյուր երեսունինը), իսկ ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 56 953 (հիսունվեց հազար ինը հարյուր հիսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

***8. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)***

ԶԵԿՈՒՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գայանե Մելքումյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 31-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 17,3 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,8 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձի՝ Անահիտ Խաչատուրի Պետրոսյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 17,3 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,8 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 17,3 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,8 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Անահիտ Խաչատուրի Պետրոսյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 17,3 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,8 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն ուղղակի վաճառքի ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձ, գնման նախապատվության իրավունքով օտարել Անահիտ Խաչատուրի Պետրոսյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 279 856 (երկու հարյուր յոթանասունինը հազար ութ հարյուր հիսունվեց), իսկ ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 53 861 (հիսուներեք հազար ութ հարյուր վաթսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

***9. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)***

ԶԵԿՈՒՅԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Լուսինե Երիցյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 31-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 16,8 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,8 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձի՝ Կարեն Մաիլեստի Մելիքյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 16,8 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,8 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 16,8 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,8 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Կարեն Մաիլեստի Մելիքյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 16,8 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,8 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն ուղղակի վաճառքի ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձ, գնման նախապատվության իրավունքով օտարել Կարեն Մաիլեստի Մելիքյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 271 767 (երկու հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր վաթսունյոթ), իսկ ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 53 861 (հիսուներեք հազար երեք հարյուր վաթսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

***10. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)***

ԶԵԿՈՒՅԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գոռ Մարկոսյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն և 2006 թվականի մայիսի

18-ի թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով «Նարինե Առաքելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի նոյեմբերի 11-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 16,0 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,0 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձի՝ Արմեն Վախթանգի Սեդրակյանի խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 16,0 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,0 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 16,0 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,0 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրացում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Արմեն Վախթանգի Սեդրակյանի կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0003-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 16,0 քառ.մետր մակերեսով հողամասի ու վրան ամրակայված 16,0 քառ.մետր արտաքին մակերեսով ավտոտնակն ուղղակի վաճառքի ձևով, որպես տվյալ կառույցն իրականացրած անձ, գնման նախապատվության իրավունքով օտարել Արմեն Վախթանգի Սեդրակյանին, ընդ որում՝ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 258 826 (երկու հարյուր հիսունութ հազար ութ հարյուր քսանվեց), իսկ ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 51 296 (հիսունմեկ հազար երկու հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

### *11. ԼՍԵՑԻՆ - ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ)*

ԶԵԿՈՒՑԵՑ – համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գայանե Մելքումյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն և 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 29-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը, հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով հողամասից 12,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ և հիմք ընդունելով նշված հողամասին կից՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 1/94 հասցեի 19,1 քառ. մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Անդրանիկ Արարատի Թադևոսյանի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07052024-07-0011 վկայական, տրված՝ 2024 թվականի մայիսի 7-ին) խնդրանքը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով հողամասից 12,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով հողամասից 12,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Անդրանիկ Արարատի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 1/94 հասցեի 19,1 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին կից, իր կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0359-0002 կադաստրային ծածկագրով հողամասից 12,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի ձևով, որպես ընդլայնում, կադաստրային արժեքով, որը կազմում է 126 166 (մեկ հարյուր քսանվեց հազար մեկ հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, օտարել Անդրանիկ Արարատի Թադևոսյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 13
դեմ - 0
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն:**

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ԳՈՌ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԱՆՅԱՆ

ՎԱՐՍԵՆԻԿ ԲԼԵՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔՅԱԼՈ ՀԱՍՈՅԱՆ

ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՐԻՇԱ ԿՈԲԱԼՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ն.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Արձանագրող՝* *Ա.Պետրոսյան*